

ՆԱՐԵԿ
ԱՂՕԹԱՄԱՏԵԱՆ
Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՈՅ

Բան ԽԲ.

Ա.— Տէր Աստուած գթութեան, փրկութեան եւ ողորմութեան, քաւութեան եւ նորոգութեան, բժշկութեան եւ առողջութեան, լուսաւորութեան եւ կենդանութեան, բարութեան եւ անմահութեան, յիշէ՛ զիս երբ գաս Քու թագաւորութեամբդ, Ահաւոր, Հզօր, Բարերար եւ Ամենաստեղծ, Կենդանի, Գովեալ, Ամենակատար, որ մերձ ես բոլոր արարածներուն հառաչանքին: Քիզի կը պաղատիմ՝ Քեզի խաչակից եղողին հետ, որ թէեւ Քեզի համար չբռնուեցաւ, չկապուեցաւ. չկախուեցաւ, չգամուեցաւ, Քու մեծութեանդ անունով չկոփուեցաւ, չանարգուեցաւ, չլլկուեցաւ, չքամահրուեցաւ, չխորտակուեցաւ, չմահացուեցաւ, սակայն արդարներուն արքայութեանը — որ բաժինն է լոյսի անձկացողներուն — արժանի երեւցաւ, ու Դուն երդումով ծանուցիր իրեն տուած բարիքներուդ անփոփոխութիւնը, ու զինքը փառաւորելով՝ յաւիտենական փրկութեան յոյսը տուիր լքուածիս:

Բ.— Օրհնեա՛լ, օրհնեա՛լ, դարձեալ օրհնեա՛լ. զի՛ս ալ ընդունէ նոյն հաւատքով ու կործանումէս կանգնեցո՛ւր զիս, ո՛վ Բարերար, բժշկէ՛ զիս ախտաւոր հիւանդութենէս, Ողորմած մահուան եզերքէն կեանքին դարձուր զիս, կենդանութիւն. Քուկդ եմ ես, ապրեցո՛ր զիս անոր հետ, ապաւինութիւն. հոգուով մեռածիս կենդանական շունչ շնորհէ՛, յարութիւն, կեանք՝ եւ անմահութիւն. անպակաս բարութիւն ես Դուն, անսպառ շնորհ, անփոփոխ ներողութիւն, ամերազօր աջ, ամենիշխան ձեռք, ամենամօտ մատ: Կամեցի՛ր Տէ՛ր, ու պիտի փրկուիմ. ակնարկէ՛ միայն գթութեամբ, ու պիտի արդարանամ. ըսէ՛ խօսքով, ու անմիջապէս պիտի սրբուիմ. մոռցի՛ր չարիքներուն թիւը, ու իսկոյն պիտի համարձակվիմ. առատաձեռնէ՛, ու հիմակ Քու վրադ պիտի պատուաստուիմ. ամէն բանի մէջ փառաւորուած ես Դուն յաւիտեանս. ամէն:

Բառարան

Կոփել - Կռուփի հարուած իջեցնել, ծեծել:

Քամահրել - Արհամարհել, անարգել:

Պատուաստել - Ճիւղ մը ուրիշ բունի վրայ մշակել